Senior Researcher of the "Matenadaran"
M. Mashtots Research Institute of Ancient Manuscripts

SUMMARY

The scientific article presents the definition and interpretation of the sign by St. Augustine in the subject of research of his conception of "Sacred Hermeneutics". The Holy Father notes that the interpreter and reader in the problem of understanding wisdom of Holy Scripture can often come across unknown signs and their own or figurative meanings. Therefore, in his treatise "Christian Science", developing his conception of "Sacred Hermeneutics" to help the interpreter and all readers of Holy Scripture, he explains in detail the means of understanding unknown signs and their meanings.

Key words: "SACRED HERMENEUTICS" ("Hermeneutica sacra"), understanding, interpretation, subject of research, sign, meaning.

ԳԵՂԵՑԻԿԻ՝ ԻԲՐԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Արմեն Օսիպյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի լաբորանտ

Գեղեցիկը՝ իբրև լայնորեն տարածված և բազմաբովանդակ երևույթ, որն իր ուրույն տեղն ունի բնության և հասարակության ոլորտում, ամենայն իրավամբ հանդիսանում է գեղագիտության կարևորագույն կատեգորիա: Ծնունդ առնելով անտիկ, և, դեռ ավելի վաղ՝ Հին Արևելքի ժամանակաշրջանում, վերոհիշյալ գեղագիտական հասկացությունը, այնուամենայնիվ, իր գիտական բովանդակությունն ու զարգացումն է ստացել Հելլադայում՝ Հին Հունաստանում: Ինչպես նշում է XX դարի հանրաճանաչ հայ գեղագետ Վ. Ա. Հովսեփյանը (Օսիպյանը), «...Հելլադան եղել է այն երկիրը, որտեղ գեղեցիկը և արվեստը ուսումնասիրող գիտությունը բարձրացվել է տեսական մակարդակի»[1]:

Անվիճելի է գեղեցիկի կատեգորիալ բնույթը և նրա առանցքային դերն ու նշանակությունը գեղագիտական այլ կատեգորիաների շար-

[1] **Հովսեփյան Վ. Ա.**, Գեղագիտական ուսմունքների պատմություն, ԵՊՀ հրատ., Ե., 1979, էջ 5:

քում, ինչպիսիք են՝ վեհը, ողբերգականը և կատակերգականը, գեղագիտական ճաշակն ու իդեալը: Չէ որ զուրկ լինելով գեղեցիկի բովանդակային ներկայությունից՝ վերոհիշյալ մնացած երևույթներն ու հասկացությունները կորցնում են իրենց գեղագիտական արժեքն ու նշանակությունը, ստանալով զուտ բնական և հասարակական, սակայն ոչ գեղագիտական ֆենոմենի կարգավիճակ: Բնութագրելով գեղեցիկը, որպես կարևորագույն էսթետիկական երևույթ, առանց որի, լինելով վերջինիս ածանցյալները, չեն կարող գոյատևել վերոհիշյալ բոլոր գեղագիտական կատեգորիաները, մենք մեր առջև խնդիր ենք դրել բացահայտելու և ցուցադրելու նրա, գեղեցիկի, հետ կապված ընկալումների և վերլուծությունների էվոլյուցիոն զարգացումը և տեսական աճը:

Հավատարիմ լինելով ժամանակագրության սկզբունքին, անցնենք մեր բուն խնդրի վերլուծությանը:

Հարկ է կրկին նշել, որ ի տարբերություն մեր կողմից ուսումնասիրվող գեղագիտական կատեգորիային տված առանձին գնահատականներին, որոնք արտահայտված են Հին Արևելքի, ինչպես նաև չինացի և հնդիկ մտածողների շրջանում, անտիկ դարաշրջանի, և, առաջին հերթին, հույն փիլիսոփաների կողմից է սահմանվել զուտ գիտական և տեսական օրինաչափություններով լի մոտեցում սույն խնդրի հանդեպ:

«Հին Հունաստանի առաջին գիտնականները պյութագորականներն էին, որոնք մաթեմատիկայի, աստղագիտության, մեխանիկայի, երաժշտագիտության, բուսաբանության և այլ գիտական բնագավառների հետ միասին զբաղվում էին նաև գեղագիտությամբ»[2]: VI դ. մ. թ. ա. ծնունդ առած այս գիտական հոսանքի ներկայացուցիչները, որոնց թվին պատկանում են Արքիդեսը, Փիլոլայոսը և այլոք, փորձում էին բացահայտել գեղեցիկի ծագումն ու բովանդակային հիմքը: Այսպիսով, արդարացիորեն մտածելով, որ բազմաքանակ և բազմատեսակ առարկաների ընդհանրության հիմքում ընկած է էությունը: Պյութագորականները հակված էին մտածելու, որ այն հիմունքը, որը զետեղված է տարբեր առարկաներում և երևույթներում և ապահովում վերջիններիս գեղեցիկ լինելը՝ թիվն է: «Աշխարհում առաջին անգամ նրանք (պյութագորականները – Ա. Օ.) են

[2] Նույն տեղում, էջ 6:

հետաքրքրվում այն հարցով, թե ինչու իրար ոչ նման երևույթները, որոնք տարբեր են իրարից բազմաթիվ ֆիզիկական և այլ հատկություններով, այսուհանդերձ, ունեն մի որոշակի ընդհանրություն. էսթետիկական կարգի մի ընդհանրություն, այսինքն՝ տգեղ կամ գեղեցիկ են»[3]: Երևում է, որ այսպիսով պյութագորականները ձգտում էին օրինաչափություն հայտնագործել և հաստատել իրերի և երևույթների հարուստ և բազմաբովանդակ աշխարհում: Հետաքրքիրն այն է, որ վերծանելով գեղեցիկի, որպես գեղագիտական ֆենոմենի մաթեմատիկական էությունը, սույն գիտական հոսանքի ներկայացուցիչները՝ փորձելով պարզաբանել վերջինիս ծագումը, տալիս են միանգամայն գեղարվեստական, և, կարելի է ասել, ռոմանտիկական բացատրություն: Ըստ պյութագորականների, գեղեցիկը, ինչպես նաև նրա բացարձակ և վառ դրսևորումը՝ երաժշտությունը ծնվում է իրենց ուղեծիրներով թռչող մոլորակների արձակվող մեղեդային ձայների ներդաշնակության հետևանքով: Բացի այդ, վերը նշված փիլիսոփայական հոսանքի ներկայացուցիչները գեղեցիկի գոյությունն ու զարգացումը կապում են բնության և հասարակության մեջ տեղ գտած հակադրությունների հաշտեցման հետ:

Պյութագորականներից հետո ասպարեզ եկած Հերակլիտեսը (VI-V դդ. մ. թ. ա.), հակառակը, դիտարկում էր վերոհիշյալ գեղագիտական ֆենոմենը որպես հակադրությունների պայքարի արդյունք: Ըստ մեզ, նմանատիպ բնաութագիրը ավելի շուտ համապատասխանում է դրամատիկականի, կամ դրամատիզմի էությանը, սակայն կարելի է ենթադրել, որ սույն հանրաճանաչ հույն փիլիսոփան ենթագիտակցորեն զգում էր այդ երկու գեղագիտական երևույթների՝ գեղեցիկի և դրամատիկականի բնական և անբաժանելի կապը:

Անտիկ դարաշրջանի մյուս երկու հանրաճանաչ հույն մտածողներ՝ Դեմոկրիտը և Սոկրատը (V-IV դդ. մ. թ. ա.) դրսևորում են տրամագծորեն հակադիր վերաբերմունք և գնահատական մեզ հետաքրքրող խնդրի նկատմամբ: Այսպիսով՝ եթե առաջինը դիտարկում է գեղեցիկը իբրև երևույթ, որը գոյանում է կարգից, համաչափությունից, ամբողջականի մեջ մասերի ներդաշնակությունից, ապա երկրորդը բխեցնում է վերոհիշյալ ֆենոմենը օգտակարից, կամ բարիքից: Այլ կերպ ասած՝ գեղեցիկ կարող է

[3] Նույն տեղում, էջ 7:

համարվել միայն այն առարկան, որը ծառայում է մարդու անձնական կամ հասարակական կարիքներին: Սոկրատը այս կապակցությամբ սիրում էր հաճախակի կրկնել, որ չի կարող գեղեցիկ համարվել վահանը, որն արտաքնապես հաճելի տեսք ունի, սակայն ունակ չէ մարտում պաշտպանելու զինվորին:

Այս համատեքստում մենք անհրաժեշտ ենք համարում նաև ներկայացնել հին հունական փիլիսոփայության անվիճելի առաջատարների՝ Պլատոնի և Արիստոտելի (IV դ. մ. թ. ա.) հայացքները: Ու թեպետ առաջինը, խոսելով գեղեցիկի ծագման և դրսևորման մասին, չի անդրադառնում վերջինիս էությանը և կառուցվածքի խնդրին, իսկ երկրորդը՝ պարզապես լրացնում վերոհիշյալ գեղագիտական երևույթին Դեմոկրիտի կողմից տված գնահատականը, այնուամենայնիվ, առանց այդ երկու հռչակավոր մտածողների, մեր պատկերացումները խնդրո առարկայի մասին կլինեն թերի և ոչ ամբողջական:

Պլատոնի տեսության համաձայն՝ գոյություն ունի գաղափարների աշխարհ և իրերի աշխարհ: Վերջինս հանդիսանում է առաջինի երկրային և իրեղեն արտացոլումը: Այս կապակցությամբ, ըստ մտածողի՝ գեղեցիկ իրերն ու երևույթները հանդիսանում են իբրև գեղեցիկի գաղափարի, կամ հասկացության առանձին վերցրած դրսևորումներ: Մի խոսքով, չլիներ տիեզերքում օբյեկտիվորեն գոյություն ունեցող գեղեցիկի գաղափարը, անիմաստ կլիներ ընդհանրապես խոսել գեղեցիկ իրերի և երևույթների մասին: Այս մտքերը Պլատոնի կողմից բավականին հստակ արտահայտված են իր «Հիպիաս Մեծ» և «Խնճույք» աշխատություններում:

Ինչ վերաբերում է Արիստոտելին, ապա նա իր հանրաճանաչ «Պոետիկայում»՝ խոսելով մեր կողմից հետազոտվող գեղագիտական կատեգորիայի մասին, նշում է վերջինիս արտաքին կարևորագույն մի քանի հատկություններ: Գեղեցիկն, ասում է Արիստոտելը, իրերի, արարածների և երևույթների այնպիսի մի հատկություն է, որը գոյանում է այնպիսի անհրաժեշտ պայմաններից, ինչպիսիք են՝ կարգը, համաչափությունը, որոշակիությունը, բազմաձևության մեջ ընդհանրությունը և ռիթմը: Հարկ է նշել, որ վերջին երկուսը գեղեցիկի բնութագրի ասպարեզում կարևորագույններից են և հետագայում անջնջելի հետք ու ազդեցություն են թողնում հետագա ժամանակների և սերունդների փիլիսոփաների և տեսաբանների այս առումով արված վերլուծությունների վրա: Եվ, իսկապես, դժվար է պատկերացնել

գեղեցիկ առարկա կամ երևույթ, որն աչքի է ընկնում իր տեսակին հատուկ լավագույն կողմերի ընդհանրության կամ ներքին ռիթմիկականության բացակայությամբ:

Անցում կատարելով դեպի վաղ միջնադարի ժամանակաշրջանը, պետք է միանգամից նշենք, որ գիտական և հանրային վերաբերմունքը մեր կողմից հետազոտվող գեղագիտական կատեգորիայի նկատմամբ այստեղ որակապես և բովանդակային առումով տարբերվում է անտիկ դարաշրջանից: Գեղեցիկը՝ չենթարկվելով կառուցվածքային վերլուծություններին անվերապահորեն դասվում էր աստվածայինին, այսինքն՝ գեղեցիկը իր բուն իմաստով Աստծո արտացոլանքն է երկրի վրա, իսկ առանձին վերցրած երկրային գեղեցկությունները վերը նշված աստվածային գեղեցկության դրսևորումներ են: Ճանաչված փիլիսոփա-աստվածաբաններ Օգոսթինոս Երանելին (IV-V դդ.), Բոեցիուսը (V-VI դդ.), ինչպես նաև Ուլրիխ Ստրասբուրգցին (XIII դ.) գեղեցիկը կապում են միմիայն Աստծո հետ, իսկ ինչ վերաբերում է գեղեցիկ առարկաներին, երևույթներին և, վերջապես, մարդկանց, ապա, նրանց կարծիքով, այդ ամենը՝ քանի որ ստեղծված է հենց Աստծո կողմից, զուրկ է ինքնուրույնության կարգավիճակից:

Այստեղ հարկ է նշել, որ ի տարբերություն այդ ժամանակվա եվրոպացի փիլիսոփա-աստվածաբանների, վաղ միջնադարի հայ ներկայացուցիչները, ինչպիսիք էին Եզնիկ Կողբացին (մահացել է մոտ 450 թ.) իր «Եղծ աղանդոց»-ով, Հովհան Մանդակունին (V դ.) իր «Ճառեր»-ով, թեև իբրև գեղեցիկի աղբյուր անվերապահ դիտում էին Աստծուն, կամ աստվածայինը, սակայն ամենևին չէին նսեմացնում և արժեզրկում երկրային գեղեցկության նշանակությունը: Ինչպես վկայում է ճանաչված հայ գեղագետ Ա. Ադամյանը՝ խոսելով նրանցից առաջինի մասին. «...աստվածաբան Եզնիկը կանգնած է երկու ոտքով մեղսավոր երկրի վրա»[4]:

Վաղ միջնադարին փոխարինելու է գալիս Վերածնության դարաշրջանը իր արմատապես փոփոխված հայացքներով իրականության և արվեստի նկատմամբ, ինչպես նաև նորագույն գեղարվեստական նմուշներով և գաղափարներով: Ի հակակշիռ նախորդ ժամանակաշրջանի՝ այստեղ գեղեցիկին իբրև գեղագիտական երևույթին հաղորդվում է աշխարհիկ բնույթ: Վերածննդի գեղա-

[4] **Адамян А.,** Эстетические воззрения средневековой Армении, Ер., 1955, С. 156.

գիտության կարկառուն ներկայացուցիչներից են Լորենցո Վալլան (1407-1457) իր «Վայելքների մասին» աշխատությամբ և Լեոն Բատիստա Ալբերտին (1404-1472) իր առանձին պահպանված գրառումներով: Հատկանշական է, որ երկուսի համար էլ գեղեցիկն ունի բնական, և ոչ թե երկնային ծագում: Համոզված լինելով, որ ինքը, գեղեցիկը, ենթակա չէ գիտական ուսումնասիրման, այլ, պարզապես, հանդիսանում է հիանալու և զմայլվելու առարկա, Վալլան և Ալբերտին տալիս են վերջինիս բնութագիրը: Ըստ վերոհիշյալ գործիչների՝ համաչափությունն ու ներդաշնակությունն են ապահովում գեղեցիկի ընկալումը, իսկ վերջինիս ամենաբարձր տեսակն է՝ մարդու և նրա մարմնի գեղեցկությունը:

Եթե եվրոպական Վերածննդի դարաշրջանի տեսաբաններն առավելապես աչքի էին ընկնում գեղեցիկի նկատմամբ հայեցողական մոտեցմաբ, ապա Հայոց Վերածննդի (X-XIII դդ.) ներկայացուցիչները փորձում էին տալ մեր խնդրո առարկային խորը և հիմնավոր վերլուծություն: Այսպես, Հովհաննես Սարկավագի համար (1045-1129) գեղեցիկի ծագման պատճառն են հանդիսանում բնության մեջ գործող հակասական ուժեր, որոնց անհրաժեշտությունն անվիճելի է աշխարհի զարգացման տեսակետից: Ըստ մեծանուն հայ փիլիսոփայի՝ իսկական գեղեցկությունը մարմնավորված է բնության մեջ, իսկ վերջինիս **կատարելությունը**՝ կարևոր նախապայման է ամեն մի կոնկրետ, գեղեցիկ երևույթի համար[5]: Այդ ամենն անվանի հայ մտածողը շարադրել է իր փիլիսոփայական չափածոյի մեջ՝ «Խոսք իմաստության» ստեղծագործությունում:

Հովհաննես Երզնկացին (XIII դ.), իր նախորդի նման, ճշմարիտ գեղեցկությունը տեսնում է բնության մեջ և, զարգացնելով վերջինիս գաղափարը, իրականության մեջ գոյություն ունեցող գեղեցիկը անհամեմատ ավելի բարձր է դասում արվեստի գեղեցկությունից: Ի դեպ, նա առաջիններից է, ով կլասիցիզմի դարաշրջանից դարեր առաջ, շոշափում է իրականության և արվեստի գեղագիտական հարաբերությունները:

Բացի այդ, կլասիցիզմի տեսաբաններին հատուկ գեղեցիկի սահմանումը (Դեկարտ, Բուալո-XVII դ.), որը հիմնվում է կատարելության վրա, ինչպես տեսանք, արդեն մի քանի հարյուրամյակ առաջ

[5] Տե՛ս Հավհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե., 1956, էջ 17:

հնչեցված էր մեր պանծալի հայրենակիցների կողմից: Եվ քանի որ վերոհիշյալ գեղագիտական ուղղվածությունը (նկատի ունենք կլասիցիզմը) մեր կոնկրետ հետազոտության համար այլևս ոչ մի արժեքավոր նյութ չի պարունակում, հարկ ենք համարում անմիջապես անցում կատարել դեպի հաջորդ՝ Լուսավորության ժամանակաշրջանը: Վերջինիս համար հատուկ է գեղեցիկի դիտարկումը իբրև բնության մեջ օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթի մի կողմից, մյուս կողմից էլ՝ վերջինիս արժևորումն ու գնահատականը անմիջականորեն կախված է մեր զգայարաններից, կամ զգայական մոտեցումից: Ինչպես հայտնի է, լուսավորական գեղագիտությունը սկիզբ է առնում Ֆրենսիս Բեկոնի (1561-1626) փիլիսոփայական աշխատություններում: Մեծանուն մտածողը համոզված էր, որ գեղեցիկն ունի ոչ թե գերբնական, այլ երկրային ծագում: Հետաքրքիր է վերջինիս միտքն այն մասին, որ սույն գեղագիտական երևույթը կարող է լիարժեք գոյություն և ընդգծվածություն ունենալ միմիայն տգեղի հարևանությամբ: Բեկոնի հայրենակից, անգլիական լուսավորության նույնքան նշանավոր ներկայացուցիչ Ֆրենսիս Հաթչեսոնը (1694-1747) իր «Գեղեցկության և առաքինության մասին մեր գաղափարների առաջացման հետազոտությունը» աշխատությունում արժեքավոր բացահայտում է անում, ասելով, որ գեղեցիկի ընկալման համար կարևորագույն նախապայմանն է գեղագիտական օբյեկտի և գեղագիտական սուբյեկտի առկայությունը:

Մյուս եվրոպական երկրի՝ Ֆրանսիայի լուսավորական ներկայացուցիչներ Շառլ Մոնտեսքյոն (1689-1755) և Դենի Դիդրոն (1713-1784) իրենց արժանի ավանդն են ներդրել մեր կողմից հետազոտվող գեղագիտական կատեգորիայի կարևոր հատկանիշների բացահայտման գործում: Այսպես՝ նրանցից առաջինը իր «Հետաքննություն ճաշակի մասին» գրքում ընդգծում է գեղեցիկի ոչ կիրառական, այլ զուտ էսթետիկական բնույթը, իսկ երկրորդը՝ խոսելով վերջինիս ծագման մասին, արդարացիորեն մատնանշում է գոյություն ունեցող **հարաբերությունը** բնության և հասարակության միջև իբրև գեղեցիկի ծննդի և զարգացման սկզբնապատճառ:

Մեր պատկերացումները մեզ հետաքրքրող գեղագիտական ֆենոմենի մասին կլինեն թերի և ոչ ամբողջական, եթե մենք չանդրադառնանք նաև Լուսավորության ժամանակաշրջանի գերմանացի մտածողների և տեսաբանների համապատասխան

դրույթներին: Գերմանիայի լուսավորականների ճանաչված ներկայացուցիչ Յոհան Յոախիմ Վինկելմանը (1717-1768), բնութագրելով գեղեցիկը, առանձնահատուկ տեղ է հատկացնում **իդեալի** գաղափարին, այսինքն՝ ըստ նրա, գեղեցիկի կարգավիճակին հավակնող իրերն ու երևույթները պետք է անպայմանորեն պարունակեն իրենց մեջ ձգտում դեպի իդեալականը: Այսպես, համարելով հին հունական «Լաոկոոն» քանդակը իբրև գեղեցիկի և իդեալի ձգտման վառ արտահայտում, ճանաչված տեսաբանը գրում է. «...այդ աստիճան մեծ հոգու արտահայտչականությունը խստագույն գերազանցում է գեղեցիկ բնորդի կերպավորումը»[6]: Այլ կերպ ասած, ըստ Վինկելմանի՝ ցանկացած մարդ, այդ թվում նաև բնորդը, ունակ չէ նույն ուժգնությամբ արտահայտելու այն, ինչ մենք նկատում ենք արվեստի կոթողներում, այն է. ընդհանրացված բարեպաշտությունները և անհագուրդ ձգտումը դեպի հավերժականը, և, վերջին հաշվով, դեպի իդեալականը:

Ի տարբերություն Վինկելմանի, որի համար գեղեցիկի իդեալը կայանում էր խաղաղ և անշարժ վեհության մեջ, վերջինիս հայրենակից Հոթհոլդ Եփրայիմ Լեսինգի (1729-1781) համար, ընդհակառակը, վերոհիշյալ գեղագիտական երևույթը ամենևին էլ չի ենթադրում ներքին հանգստություն և հույզերի զսպում: Ըստ Լեսինգի՝ գեղեցիկը իր մեջ պարունակում է շարժում և ներքին ազատություն: Իր «Համբուրգյան դրամատուրգիայում» հեղինակը խոսում է մեր խնդրո առարկայի այնպիսի մի կարևոր և անհերքելի հատկանիշի մասին, ինչպիսին է **ընդհանուրի** և **մասնակիի** հարաբերակցությունը:

Գեղեցիկի մասին դատողությունների և ընկալումների հարցում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գերմանական դասական փիլիսոփայությունը: Նրա արժանի ներկայացուցիչներն են Իմմանուիլ Կանտը (1724-1804), Գեորգ Վիլհելմ Հեգելը (1770-1831) և այլոք: Շատերի վկայությամբ՝ նրանք նոր շունչ և բովանդակություն են հաղորդել գեղագիտությանը: Կանտը իր «Դատողության ունակության քննադատությունում» խոսում է կարևորագույն էսթետիկական կատեգորիայի մասին, ընդգծելով առաջին հերթին այն երևելի փաստը, որ վերջինիս ընկալման հիմքում ընկած է <u>անշահախնդրությունը</u>: Զարգացնելով իր միտքը, նա շարունակում է, որ

[6] **Винкельман И.И.,** Избр. произведения и письма., М.-Л., 1935, С.108.

գեղեցիկը համընդհանուր հիացմունքի առարկա է, և ինչպես նշում է ինքը, փիլիսոփան, անհրաժեշտ հիացմունքի առարկա: Կանտը նաև պնդում է, որ անկախ իր անշահախնդիր բնույթից, գեղեցիկը միևնույն ժամանակ հանդիսանում է որպես առարկայի նպատակա-հարմարության հատկանիշ: «Գեղեցիկ է այն ամենը, ինչ անհրաժեշտաբար դուր է գալիս բոլորին առանց որևէ շահի, իր մաքուր ձևով»[7]:

Տրամաբանական բոլորովին նոր մոտեցում է ցուցաբերում գեղեցիկի նկատմամբ մեծանուն փիլիսոփա Հեգելը: Դիտարկելով և վերլուծելով գեղագիտության առաջնային կատեգորիան՝ նա անում է բացարձակապես նոր որակի հայտարարություն: Իր բազմահատորանոց «Էսթետիկա» աշխատությունում Հեգելը բնութագրում է գեղեցիկը որպես բովանդակության, կամ գաղափարի, և ձևի, կամ կերպարի համապատասխանություն: Եթե, ըստ մտածողի՝ այդ երկու կարևորագույն բաղադրիչներից մեկը առավելություն ստանա մյուսի նկատմամբ, կամ, այլ կերպ ասած՝ խախտվի նրանց միջև եղած անհրաժեշտ բալանսը, կամ հավասարակշռությունը, ապա գեղեցիկը այս պարագայում դադարում է գոյություն ունենալ և վերանում է: Ակնհայտ է, որ Հեգելից առաջ գեղագիտության պատմության մեջ դեռևս ոչ ոք չէր դիտարկում գեղեցիկը բովանդակության և ձևի համապատասխանության տեսանկյունից, ինչը և առիթ է տալիս մեզ պնդելու, որ մեծանուն փիլիսոփայի կողմից նոր խոսք է հնչեցվել էսթետիկայի բնագավառում:

Հեգելյան իդեալիստական տեսակետը, որի համաձայն գեղեցիկը՝ «բացարձակ ոգու» ինքնադրսևորման ձևերից մեկն է, խիստ քննադատության է արժանանում ռուս տեսաբան և քաղաքական գործիչ Նիկոլայ Չեռնիշևսկու (1828 - 1889) կողմից: Չվիճարկելով գերմանացի մեծ փիլիսոփայի կարևորագույն գեղագիտական կատեգորիային տրված կառուցվածքային գնահատականը, այն է՝ բովանադակության և ձևի համապատասխանությունը, վերջինս, այնուամենայնիվ, իր մատերիալիստական դիրքերից ելնելով, այս առումով հնչեցնում է իր սեփական սահմանումը: «Գեղեցիկը՝ կյանք է ... Գեղեցիկ է այն առարկան, որը ցուցաբերում է կյանք կամ մեզ

[7] **Кант И.,** Сочинения, М, 1965, т. 5, С. 205.

հիշեցնում է կյանքի մասին»[8]: Ու թեև Չեռնիշևսկին տեղադրում է մեզ հետաքրքրող գեղագիտական երևույթը բուն իրականության շրջանակներում, չկապելով այն շատերի համար անբացատրելի և անընմբռնելի «բացարձակ ոգու» հետ, այնուհանդերձ, իր նկարագրողական և ամենևին ոչ վերլուծական մոտեցումով, անկասկած, զիջում է հեգելյան փիլիսոփայա-տրամաբանական տեսակետին:

Մեր կողմից դիտարկվող՝ գեղեցիկի ընկալման էվոլյուցիոն զարգացման խնդրի տեսանկյունից մենք նպատակահարմար ենք գտնում նաև անդրադառնալու խորհրդային էսթետիկայի այնպիսի նշանավոր դեմքերին, ինչպիսիք են Մ.Կագանը և Ա.Քալանթարը: Նրանցից առաջինը իր «Դասախոսություններում գեղագիտության մասին» (1971) գրքում, դառնալով գեղեցիկի պրոբլեմին, զարգացնում է Ա.Վինկելմանի գաղափարը իդեալի և վերը նշված գեղագիտական երևույթի ծագման և ինքնադրսևորման մասին: Եվ եթե գերմանացի տեսաբանը գեղեցիկի հարցում կարևորագույն հանգամանք էր համարում ձգտումը դեպի իդեալը, ապա այս առումով՝ Կագանը ցուցաբերում է առավելապես նոր մոտեցում: Ըստ նրա, գեղեցիկը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրականի և իդեալականի համապատասխանություն: Վերոհիշյալ գիտնականի համար գեղեցիկի հիմունքներն են իրականը (ռեալը) և իդեալականը իրենց փոխներգործության հետ միասին:

Վերոհիշյալ դարաշրջանի մյուս հռչակավոր գեղագետ, մեր հայրենակից Ա.Քալանթարը (1924 - 1983) իր «Գեղեցիկի պրոբլեմը» գրքում, հիմք ընդունելով հեգելյան գնահատականը գեղագիտության կարևորագույն կատեգորիայի մասին իբրև բովանդակության և ձևի համապատասխանություն, տալիս է մեր խնդրո առարկային իր խորացված սահմանումը: Ըստ հայ գեղագետի՝ գեղեցիկը ոչ միայն բովանդակության և ձևի համապատասխանությունն է, դա սույն գեղագիտական երևույթի համար անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է, քանի որ, օրինակ, չի կարող գեղեցիկ համարվել տգեղ և, միևնույն ժամանակ, ցածր բարոյական հատկանիշներ դրսևորող մարդը, չնայած որ այս դեպքում բովանդակության և ձևի համապատասխանության փաստն ակնհայտ է: Այս կապակցությամբ Քալանթարը նշում է, որ գեղեցիկը առաջանում է բարձր զարգացած բովանդակության և բարձր զարգացած ձևի համապատասխանության

---

[8] **Չեռնիշևսկի Ն.Գ.**, Էսթետիկա, Ե., 1963, էջ 1:

առկայությունից: Հեղինակը նշում է, որ «այս միասնությունը գեղեցկության համար բավարար պայման է»[9]: Բացահայտելով գեղեցիկի էությունը, Քալանթարը գրում է. «Գեղեցիկը օրինաչափորեն զարգացող երևույթ է. գեղեցիկ է այն առարկան, որում իրագործվում է անհատականի և ամբողջ տեսակի միասնությունը»[10]: Զարգացնելով իր տեսությունը, ճանաչված գեղագետը նշում է, որ **գեղեցիկի բովանդակությունը**, որը ենթադրում է **զարգացում**, պետք է անպայմանորեն ենթադրի նաև **ձևի կատարելություն**:

Իրականացնելով յուրահատուկ պատմավերլուծական էքսկուրս, մենք, իհարկե, հաշիվ ենք տալիս մեզ այն բանում, որ մեկ ամփոփ գիտական հոդվածի շրջանակներում անհնար է ընդգրկել մեր խնդրո առարկային վերաբերող բոլոր գաղափարներն ու դրանց հեղինակներին: Ու, թերևս, դա չէր մեր հիմնական նպատակը: Մենք խնդիր էինք դրել մեր առջև բազմաբովանդակ և երբեմն իրարամերժ գնահատականներում, որոնք վերաբերում են գեղագիտության կարևորագույն կատեգորիային՝ գեղեցիկին գտնել և իմաստավորել վերջինիս վերաբերող ընկալումների էվոլյուցիան և զարգացման ընթացքը: Լուսաբանելով տարբեր գեղագիտական մոտեցումներ գեղեցիկի և նրա էության վերաբերյալ, մենք հանգում ենք եզրակացության, որ մեր խնդրո առարկան դարձած կարևորագույն կատեգորիան անցել է բարդ և իմաստով լեցուն պատմական ճանապարհ: Դարեր շարունակ լինելով տարբեր փիլիսոփաների և մտածողների ուշադրության կենտրոնում, գեղեցիկը ստացել է և՛ զուտ հայեցողական, և՛ նկարագրողական, և՛ վերջապես, խիստ գիտական և տրամաբանական գնահատականներ: Եվ այս առումով Ա.Քալանթարի կողմից գեղեցիկին տված սահմանումը, այն է՝ բարձր զարգացած բովանդակության համապատասխանությունը բարձր զարգացած և կատարելի ձևին եղել և մնում է անգերազանցելի և ինքն իրենով պսակում է և զարդարում նախորդ ժամանակների գեղեցիկի մասին բոլոր տեսությունների գաղափարներն ու նրանց վերլուծությունները:

---

[9] **Калантар А.,** Проблема прекрасного, Е., 1981, С. 290.

[10] Там же, С. 292.

ԱՄՓՈՓՈՒՄ

Գեղեցիկը՝ իբրև կարևորագույն գեղագիտական կատեգորիա անչափ հարուստ է իր բովանդակային կառուցվածքով և դրսևորման ձևերով: Սույն լայն և համապարփակ ֆենոմենով զբաղվել են փիլիսոփաների և գեղագետների բազում սերունդներ հին ժամանակներից մինչև մեր օրերը: Մշտապես լինելով մտածող մարդկության ուշադրության կենտրոնում՝ գեղեցիկը դարերի ընթացքում արժանացել է բազմազան և, երբեմն, իրարամերժ գնահատականների: Հետևելով վերոհիշյալ էսթետիկական երևույթին վերաբերող դիտարկումներին՝ կարելի է հայտնաբերել ինչպես պարզունակ և մակերեսային պատկերացումներ, այնպես էլ գիտականորեն հիմնավորված վերլուծություններ: Մոլորակների շարժի արդյունքում առաջացած երևույթից (պյութագորականներ), առարկայի պարզապես հաճելի արտաքին տեսքից (Արիստոտել), կամ, հակառակը՝ նրա օգտակարությունից (Սոկրատ), ներքին կատարելությունից (Հովհաննես Սարկավագ, Բուալո), անշահադիտական բնույթից (Կանտ) մինչև իրականի և իդեալականի (Վինկելման, Կագան), բովանդակության և ձևի համապատասխանություն (Հեգել, Քալանթար), սա է հիմնականում գեղեցիկի ընկալման էվոլյուցիայի ընդհանուր սպեկտրը:

Բանալի բառեր. գեղեցիկը, կատեգորիա, բովանդակություն, ձև, զարգացում, էվոլյուցիա, գեղագիտականը:

ЭВОЛЮЦИОННОЕ РАЗВИТИЕ ВОСПРИЯТИЯ ПРЕКРАСНОГО КАК ЭСТЕТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ

Армен Осипян

Лаборант Института философии социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Прекрасное, как эстетическая категория, весьма богато своим структуральным содержанием и формами проявления. Этим широким и всеобъемлющим феноменом занимались многие поколения философов и эстетиков с древних времён до наших дней. Будучи постоянно в центре внимания мыслящего человечества, прекрасное в течение веков было удостоено самых различных, а порой и противоречивых оценок. В этой связи, следуя рассмотрениям, касающихся данного эстетического явления, можно обнаружить как наивные и поверхностные представления, так и научно обоснованный анализ. От явления, вызванного движением планет, (пифагорейцы), предмета, внешне приятного глазу своей формой

(Аристотель), или имеющего утилитарное значение (Сократ), внутреннего совершенства (Ованес Саркаваг, Буало), бескорыстной сущности (Кант) до соответствия реального и идеального (Винкельман, Каган), содержания и формы (Гегель, Калантар) - в этом в основном и состоит спектр эволюционного восприятия прекрасного.

Ключевые слова: прекрасное, категория, содержание, форма, развитие, эволюция, эстетическое.

THE EVOLUTIONAL DEVEOPMENT OF PERCEPTION OF BEAUTIFUL AS AESTHETIC CATEGORY

Armen Osipyan
Laboratory assistant of the Institute of Philosophy, Sociology an Law of NAS RA

SUMMARY

The beautiful as a category of aesthetics is very rich of structural contents and manifestation of forms. Many generations of philosophers and aesthetes from the ancient times till our days were busy with this wide and spacious phenomenon. Constantly being in the center of attention of intellectual mankind the beautiful during the ages was conferred by different and contradictory valuations. Following the considerations, connected with aesthetic phenomenon we can reveal as naive and superficial representations so scientifically confirmed analysis. From the phenomenon, determined by movement of planets (Pythagoreans), subject, which is pleasant with its external form (Aristotel), or , on the contrary, having utilitarian meaning (Socrates), internal perfection (Hovhannes Sarkavag, Bualo), disinterested substance (Kant) till suitability between the reality and ideal (Wincelman, Kagan), contents and form (Hegel, Kalantar) - here is the whole spectrum of evolutional perception of beautiful.

Key words: beautiful, category, contents, form, development, evolution, aesthetic.

НЕКОТОРЫЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОВЕДЕНИЯ ИНДИВИДА КАК ФУНКЦИЯ ЕГО КУЛЬТУРНО-ЦИВИЛИЗАЦИОННОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ

Александр Самарчян,
Младший научный сотрудник Института философии, социологии и права НАН РА

I. Разные культурные сообщества существуют в рамках различных стран, имеющих специфические природные, социальные и экономические особенности. Через усвоение норм и ценностей, картины мира и принятых